Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-878-02.07.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:» բառերը»,

2) լրացնել նոր 8. 1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«8. 1. Գնահատողը հաշվառումից չի հանվում և շարունակում է զբաղվել գնահատման գործունեությամբ, եթե լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում.

1) 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել նոր 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«9) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների անդամ հանդիսանալու դեպքում ապահովել ներկայություն հանձանժողովների նիստերին:»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածի.

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որակավորման քննություններն ընդունում է լիազոր մարմնի ստեղծած որակավորման հանձնաժողովը: Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում է լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրի առաջարկությամբ առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող մեկական գնահատող՝ ռոտացիոն կարգով, առավելագույնը մեկ տարի ժամկետով: Որակավորման հանձնաժողովում գնահատող անդամների քանակը չպետք է պակաս լինի երեքից: Որակավորման հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ընդգրկելու նպատակով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից գնահատողներ չառաջարկվելու կամ առաջարկված գնահատողների քանակը երեքից պակաս լինելու դեպքում լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ հանձնաժողովում ընդգրկում է առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող այլ գնահատողների:»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Որակավորման քննություններին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք:»:

Հոդված 4. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել նոր 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«9) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների նիստերին երկու անգամ անհարգելի պատճառով ներկայություն չապահովելու դեպքում: Որակավորման և մասնագիտական հանձնաժողովների նիստերին ներկայություն չապահովելը համարվում է հարգելի, եթե գնահատողը հիմնավորում է, որ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, զինվորական ծառայության մեջ, ստացիոնար բուժման մեջ, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովների նիստերին ներկայությունը չի կարողացել ապահովել իրենից անկախ այլ անհաղթահարելի պատճառներով:»:

Հոդված 5. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ստեղծում է մասնագիտական հանձնաժողով և հաստատում է դրա անհատական կազմը: Մասնագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և նվազագույնը երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող հինգ գնահատող՝ ռոտացիոն կարգով, առավելագույնը մեկ տարի ժամկետով: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրը մասնագիտական հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով պարտավոր է առաջարկել մեկական գնահատողի թեկնածություն, որոնք սույն մասի պահանջները բավարարելու դեպքում ընդգրկվում են մասնագիտական հանձնաժողովում: Մասնագիտական հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ընդգրկելու նպատակով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից գնահատողներ չառաջարկվելու կամ առաջարկված գնահատողների քանակը հինգից պակաս լինելու կամ գնահատողներին սույն մասով ներկայացված պահանջները չբավարարելու դեպքում լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ հանձնաժողովում ընդգրկում է առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող այլ գնահատողների: Մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը և գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը.»:

Հոդված 6. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,
2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կարգավիճակը ծագում է սույն օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնում հաշվառվելու պահից: Լիազոր մարմնում կարող են հաշվառվել առավելագույնը հինգ ինքնակարգավորվող կազմակերպություններ:»,

3) 5-րդ մասում «30» թիվը փոխարինել «10» թվով:

Հոդված 7. Օրենքը լրացնել նոր 24.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 24.1. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման կարգը

1. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնում հաշվառվելու նպատակով լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով ներկայացնում է դիմում՝ կից ներկայացնելով սահմանված փաստաթղթերի պատճենները, իր անդամների ցանկը, գործունեության հնգամյա ծրագիրը, ծրագրի նպատակները, կատարվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքները և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը: Սույն մասով նախատեսված փաստաթղթերով սահմանված տվյալների, բացառությամբ գործունեության հնգամյա ծրագրի և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցի, փոփոխության դեպքում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն այդ մասին անհապաղ, սակայն ոչ ուշ քան տվյալների փոփոխությունից հետո եռօրյա ժամկետում լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով հայտնում է լիազոր մարմնին:

2. Լիազոր մարմինն ուսումնասիրում է ներկայացված հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը, որոնց հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է դրանք և կայացնում որոշում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառելու վերաբերյալ: Այն դեպքում, երբ հավանության են արժանանում միաժամանակ հինգից ավելի գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ներկայացված հնգամյա ծրագրեր և այդ ծրագրերի ժամանակացույցեր, ապա լիազոր մարմնում հաշվառվում են առավել վաղ դիմում ներկայացրած կազմակերպությունները: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հնգամյա ծրագիրը պետք է հիմնված լինի Կառավարության կողմից հաստատված գործունեության միջոցառումների ծրագրի, լիազոր և այլ պետական մարմինների կողմից սահմանած, գնահատման գործունեության ոլորտին առնչվող ռազմավարությունների, ինչպես նաև ոլորտում առկա ժամանակակից ուղղությունների վրա: Սույն մասով նախատեսված հնգամյա ծրագիրը կամ այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության դիմումի հիման վրա կարող է փոփոխվել՝ նախապես՝ 1 տարի առաջ ներկայացնելով փոփոխությունների ծրագիրը և դրանց հիմնավորումը լիազոր մարմին՝ հաստատման: Լիազոր մարմինը, ներկայացված հնգամյա ծրագրի կամ այդ

ծրագրի իրականացման ժամանակացույցի փոփոխությանը հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է այն: Հաստատված հնգամյա ծրագրի ավարտից վեց ամիս առաջ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն հոդվածով սահմանված կարգով լիազոր մարմին է ներկայացնում հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը: Հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում լիազոր մարմինը վերադարձնում է ներկայացված փաստաթղթերը՝ սահմանելով առկա թերությունները վերացնելու և փաստաթղթերը կրկին ներկայացնելու մինչև 15-օրյա ժամկետ: Լիազոր մարմնի կողմից մատնանշված թերությունները չվերացնելուց հետո հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը կրկին ներակայացնելը հանդիսանում է հաշվառման մերժման, ինչպես նաև հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառումից հանելու հիմք: Լիազոր մարմնում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանվում են լիազոր մարմնի ղեկավարի իրավական ակտով:

3. Հաշվառում ստանալու համար ներկայացված դիմումը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:»:

Հոդված 8. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) 13-րդ կետում «:» կետադրանական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել նոր 14-րդ և 15-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«14) կատարել հաշվառման համար իր կողմից ներկայացված ծրագրի առնվազն 80 տոկոսը.

15) լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով ներկայացնել ամենամյա հաշվետվություններ:»:

Հոդված 9. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «30» թիվը փոխարինել «10» թվով,

2) 2-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

3) լրացնել նոր 3-6-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«3) եթե ինքնակարգավորվող կազմակերպությունը չի կատարում հաշվառման ներկայացված իր ծրագրի առնվազն 80 տոկոսը կամ կատարում է ժամանակացույցով սահմանված ժամկետների երկու և ավել անգամ խախտումներով.

4) լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով չի ներկայացնում ամենամյա հաշվետվությունները, կամ երկու և ավելի անգամ մեկ ամսից ավելի ժամկետով ուշացնում է հաշվետվության ներկայացումը.

5) հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում.

6) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում որակավորման և մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով գնահատողի թեկնածություն չառաջարկելու դեպքում:»:

Հոդված 10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում լիազոր մարմինն ընդունում է սույն օրենքի 7-րդ հոդվածից բխող իրավական ակտը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում լիազոր մարմինն ընդունում է սույն օրենքի 8-րդ հոդվածից բխող գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ամենամյա հաշվետվությունների ներկայացման կարգը:

4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիազոր մարմնում հաշվառված գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունները սույն օրենքի 7-րդ հոդվածից բխող իրավական ակտը ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում վերահաշվառվելու նպատակով լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով համապատասխան դիմումը և կից փաստաթղթերը ներկայացնում են լիազոր մարմին:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածից բխող իրավական ակտն ընդունվելուց հետո 6 ամսվա ընթացքում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների առաջին հաշվառումը իրականացվում է առանց անդամների ցանկ ներկայացնելու: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունները սույն օրենքի 7-րդ հոդվածից բխող իրավական ակտով սահմանված կարգով հաշվառվելուց հետո եռամսյա ժամկետում պարտավոր են լիազոր մարմին ներկայացնել իրենց անդամների ցանկը: Հաշվառված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունները, որոնք սահմանված եռամսյա ժամկետում լիազոր մարմին չեն ներկայացնում Օրենքով նախատեսված լիազոր մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողների առնվազն 10 տոկոսի անդամակցության վերաբերյալ տեղեկատվություն, հանվում են հաշվառումից:

6. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողները սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում շարունակում են հաշվառված լինել կամ կարող են հաշվառվել լիազոր մարմնում՝ առանց որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանն անդամակցելու:

Կ-878-02.07.2024-ՏՀ-011/1 *Երկրորդ ընթերցում*

(Լրամշակված նախագիծ)

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~16~~12-րդ ~~հոդվածի 3-րդ մասում՝~~ հոդվածում՝

3) 1-ին մասում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:» բառերը»,

4) լրացնել նոր 8. 1-ին մաս հետևյալ բովանդակությամբ.

«8. 1. Գնահատողը հաշվառումից չի հանվում և շարունակում է զբաղվել գնահատման գործունեությամբ, եթե լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում.

3) 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) լրացնել նոր 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«9) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների անդամ հանդիսանալու դեպքում ապահովել ներկայություն հանձանժողովների նիստերին:»:

Հոդված ~~2~~3. Օրենքի 20-րդ հոդվածի.

3) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Որակավորման քննություններն ընդունում է լիազոր մարմնի ստեղծած որակավորման հանձնաժողովը: Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում է լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրի առաջարկությամբ առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող մեկական գնահատող՝ ռոտացիոն կարգով, առավելագույնը մեկ տարի ժամկետով: Որակավորման հանձնաժողովում գնահատող անդամների քանակը չպետք է պակաս լինի երեքից: Որակավորման հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ընդգրկելու նպատակով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից գնահատողներ չառաջարկվելու կամ առաջարկված գնահատողների քանակը երեքից պակաս լինելու դեպքում լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ հանձնաժողովում ընդգրկում է առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող այլ գնահատողների:»:

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Որակավորման քննություններին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք:»:

Հոդված ~~3~~4. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝

3) 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) լրացնել նոր 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«9) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված որակավորման և մասնագիտական հանձնաժողովների նիստերին երկու անգամ անհարգելի պատճառով ներկայություն չապահովելու դեպքում: Որակավորման և մասնագիտական հանձնաժողովների նիստերին ներկայություն չապահովելը համարվում է հարգելի, եթե գնահատողը հիմնավորում է, որ գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, զինվորական ծառայության մեջ, ստացիոնար բուժման մեջ, ինչպես նաև համապատասխան հանձնաժողովների նիստերին ներկայությունը չի կարողացել ապահովել իրենից անկախ այլ անհաղթահարելի պատճառներով:»:

Հոդված 45. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) ստեղծում է մասնագիտական հանձնաժողով և հաստատում է դրա անհատական կազմը: Մասնագիտական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր մարմնի երկու ներկայացուցիչ և նվազագույնը երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող հինգ գնահատող՝ ռոտացիոն կարգով, առավելագույնը մեկ տարի ժամկետով: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություններից յուրաքանչյուրը մասնագիտական հանձնաժողովում ընդգրկվելու նպատակով պարտավոր է առաջարկել մեկական գնահատողի թեկնածություն, որոնք սույն մասի պահանջները բավարարելու դեպքում ընդգրկվում են մասնագիտական հանձնաժողովում: Մասնագիտական հանձնաժողովում որպես հանձնաժողովի անդամ ընդգրկելու նպատակով գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից գնահատողներ չառաջարկվելու կամ առաջարկված գնահատողների քանակը հինգից պակաս լինելու կամ գնահատողներին սույն մասով ներկայացված պահանջները չբավարարելու դեպքում լիազոր մարմինն իր նախաձեռնությամբ հանձնաժողովում ընդգրկում է առնվազն երկու տարվա գնահատողի աշխատանքային փորձ ունեցող այլ գնահատողների: Մասնագիտական հանձնաժողովի կանոնադրությունը և գնահատման հաշվետվությունների ուսումնասիրությունների իրականացման կարգը սահմանում է Կառավարությունը.»:

Հոդված 56. Օրենքի 24-րդ հոդվածում.

4) 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել,

5) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կարգավիճակը ծագում է սույն օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնում հաշվառվելու պահից: Լիազոր մարմնում կարող են հաշվառվել առավելագույնը հինգ ինքնակարգավորվող կազմակերպություններ:»,

6) 5-րդ մասում «30» թիվը փոխարինել «10» թվով:

Հոդված 67. Օրենքը լրացնել նոր 24.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 24.1. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման կարգը

1. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը լիազոր մարմնում հաշվառվելու նպատակով լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով ներկայացնում է դիմում՝ կից ներկայացնելով սահմանված փաստաթղթերի պատճենները, իր անդամների ցանկը, գործունեության հնգամյա ծրագիրը, ծրագրի նպատակները, կատարվելիք միջոցառումները, ակնկալվող արդյունքները և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը: Սույն մասով նախատեսված փաստաթղթերով սահմանված տվյալների, բացառությամբ գործունեության հնգամյա ծրագրի և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցի, փոփոխության դեպքում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունն այդ մասին անհապաղ, սակայն ոչ ուշ քան տվյալների փոփոխությունից հետո եռօրյա ժամկետում լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանված կարգով հայտնում է լիազոր մարմնին:

2. Լիազոր մարմինն ուսումնասիրում է ներկայացված հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը, որոնց հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է դրանք և կայացնում որոշում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառելու վերաբերյալ: Այն դեպքում, երբ հավանության են արժանանում միաժամանակ հինգից ավելի գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից ներկայացված հնգամյա ծրագրեր և այդ ծրագրերի ժամանակացույցեր, ապա լիազոր մարմնում հաշվառվում են առավել վաղ դիմում ներկայացրած կազմակերպությունները: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հնգամյա ծրագիրը պետք է հիմնված լինի Կառավարության կողմից հաստատված գործունեության միջոցառումների ծրագրի, լիազոր և այլ պետական մարմինների կողմից սահմանած, գնահատման գործունեության ոլորտին առնչվող ռազմավարությունների, ինչպես նաև ոլորտում առկա ժամանակակից ուղղությունների վրա: Սույն մասով նախատեսված հնգամյա ծրագիրը կամ այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության դիմումի հիման վրա կարող է փոփոխվել՝ նախապես՝ 1 տարի առաջ ներկայացնելով փոփոխությունների ծրագիրը և դրանց հիմնավորումը լիազոր մարմին՝ հաստատման: Լիազոր մարմինը, ներկայացված հնգամյա ծրագրի կամ այդ

ծրագրի իրականացման ժամանակացույցի փոփոխությանը հավանություն տալու պարագայում 20-օրյա ժամկետում հաստատում է այն: Հաստատված հնգամյա ծրագրի ավարտից վեց ամիս առաջ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը սույն հոդվածով սահմանված կարգով լիազոր մարմին է ներկայացնում հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը: Հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում լիազոր մարմինը վերադարձնում է ներկայացված փաստաթղթերը՝ սահմանելով առկա թերությունները վերացնելու և փաստաթղթերը կրկին ներկայացնելու մինչև 15-օրյա ժամկետ: Լիազոր մարմնի կողմից մատնանշված թերությունները չվերացնելուց հետո հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականցման ժամանակացույցը կրկին ներակայացնելը հանդիսանում է հաշվառման մերժման, ինչպես նաև հաշվառված ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվառումից հանելու հիմք: Լիազոր մարմնում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության հաշվառման և հաշվառումից հանելու կարգը սահմանվում են լիազոր մարմնի ղեկավարի իրավական ակտով:

3. Հաշվառում ստանալու համար ներկայացված դիմումը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:»:

Հոդված ~~7~~8. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում՝

3) 13-րդ կետում «:» կետադրանական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

4) լրացնել նոր 14-~~16~~ող և 15-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

~~«14) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում որակավորման և մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով առաջարկել գնահատողի թեկնածություն.~~

~~15~~«14) կատարել հաշվառման համար իր կողմից ներկայացված ծրագրի առնվազն 80 տոկոսը.

~~16)~~15) լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով ներկայացնել ամենամյա հաշվետվություններ:»:

Հոդված ~~8~~9. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում՝

4) 1-ին կետում «30» թիվը փոխարինել «10» թվով,
5) 2-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,
6) լրացնել նոր 3-6-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«3) եթե ինքնակարգավորվող կազմակերպությունը չի կատարում հաշվառման ներկայացված իր ծրագրի առնվազն 80 տոկոսը կամ կատարում է ժամանակացույցով սահմանված ժամկետների երկու և ավել անգամ խախտումներով.

~~4)~~4) լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով չի ներկայացնում ամենամյա հաշվետվությունները, կամ երկու և ավելի անգամ մեկ ամսից ավելի ժամկետով ուշացնում է հաշվետվության ներկայացումը.

5) հերթական հնգամյա ծրագիրը և այդ ծրագրի իրականացման ժամանակացույցը չհաստատվելու դեպքում.

6) սույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով և 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված դեպքերում որակավորման և մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով գնահատողի թեկնածություն չառաջարկելու դեպքում:»:

Հոդված ~~9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ~~10.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում լիազոր ~~մարմինը~~մարմինն ընդունում է սույն օրենքի ~~6~~7-րդ հոդվածից բխող իրավական ակտը:

~~3.~~3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում լիազոր մարմինն ընդունում է սույն օրենքի 8-րդ հոդվածից բխող գնահատման ինքնակարգավորվող

կազմակերպությունների կողմից ամենամյա հաշվետվությունների ներկայացման կարգը:

4. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիազոր մարմնում հաշվառված գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունները սույն օրենքի ~~6~~7-րդ հոդվածից բխող իրավական ակտը ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում վերահաշվառվելու նպատակով լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով համապատասխան դիմումը և կից փաստաթղթերը ներկայցնում են լիազոր մարմին:

4~~5~~. Սույն օրենքի ~~6~~7-րդ հոդվածից բխող իրավական ~~ակտի հիմքով~~ակտն ընդունվելուց հետո 6 ամսվա ընթացքում գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների առաջին հաշվառումը իրականացվում է առանց անդամների ցանկ ներկայացնելու: Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունները սույն օրենքի ~~6~~7-րդ հոդվածից բխող իրավական ակտով սահմանված կարգով հաշվառվելուց հետո եռամսյա ժամկետում պարտավոր են լիազոր մարմին ներկայացնել իրենց անդամների ցանկը: Հաշվառված գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունները, որոնք սահմանված եռամսյա ժամկետում լիազոր մարմին չեն ներկայացնում Օրենքով նախատեսված լիազոր մարմնում հաշվառված Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողների առնվազն 10 տոկոսի անդամակցության վերաբերյալ տեղեկատվություն, հանվում են հաշվառումից:

~~5. ՀՀ~~6. Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող գնահատողները սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում շարունակում են հաշվառված լինել կամ կարող են հաշվառվել լիազոր մարմնում՝ առանց որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությանն անդամակցելու:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-878-02.07.2024-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	1-ին հոդված	Նախագծով նախատեսվող փոփոխությունների համատեքստում առաջարկում ենք նաև փոփոխություն կատարել գործող Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝ նախատեսելով բացառություն այն դեպքերի համար, երբ լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ: Հաշվի առնելով վերոգրյալը նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 1. «Գնահատման գործունեության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածում. 1) 1-ին մասում «փաստաթուղթ» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ լիազոր մարմնում սահմանված	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:» բառերը», 2) լրացնել նոր 8. 1-ին մաս հետևյալ բովանդակությամբ. «8. 1. Գնահատողը հաշվառումից չի հանվում և շարունակում է զբաղվել գնահատման գործունեությամբ, եթե լիազոր մարմնում սահմանված կարգով որևէ գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպություն հաշվառված չէ:»: » Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է:		
2.	ՀՀ կառավարություն	7-րդ՝ խմբագրված 8-րդ հոդվածի 2-րդ մաս	1. Առաջարկում ենք հանել Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր՝ 14-րդ կետով սահմանվող իրավադրույթը՝ անհիմն կրկնությունից խուսափելու նպատակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում սահմանված է. «Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է՝ 6) մինչև յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 1-ը լիազոր մարմին ներկայացնել իր անդամ գնահատողների թեկնածությունները	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հաջորդ տարվա որակավորման եւ մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով: Ընդ որում, միեւնույն գնահատողը չի կարող միաժամանակ առաջարկվել եւ՝ որակավորման, եւ՝ մասնագիտական հանձնաժողովներում ընդգրկվելու նպատակով.»: Հաշվի առնելով վերոգրյալը 7-րդ՝ խմբագրված 8-րդ հոդվածի 2-րդ մասում «14-16-րդ» բառերի փոխարեն լրացնել «14-րդ և 15-րդ» բառերը և հոդվածով լրացվող նոր «14-րդ » կետը հանել: 2. Առաջարկում ենք վերանայել Նախագծի 7-րդ խմբագրված 8-րդ հոդվածի 2-րդ մասով Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր 16-րդ (խմբագրված «15)-րդ կետում սահմանված դրույթներն իրավական որոշակիության տեսանկյու- նից, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ: Վերոգրյալը հաշվի առնելով 16-րդ խմբագրված 15-րդ կետում՝ « ներկայացնել ամենամյա հաշվետվություններ:» բառերից առաջ առաջարկում ենք լրացնել «Լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կարգով» բառերը, իսկ «հաշվետվություններ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «:» կետադրական նշանը:		
3.	ՀՀ կառավարություն	8-րդ՝ խմբագրված 9-րդ հոդվածի 3-րդ մաս	Առաջարկում ենք վերանայել Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասով Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող նոր 4-րդ կետում սահմանված դրույթներն իրավական որոշակիության տեսանկյունից, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ: Հաշվի առնելով վերոգրյալը 4-րդ կետում «չի ներկայացնում» բառերից առաջ լրացնել «Լիազոր մարմնի ղեկավարի կողմից սահմանած կարգով» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	9-րդ՝ խմբագրված 10-րդ հոդված	1. Հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է. «Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի:»: 2. 2-րդ մասում «մարմինը» բառը փոխարինել «մարմինն» բառով, 3. Քանի որ Օրենքում բացակայում են գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպությունների կողմից	Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է:	Ընդունվել է: Ընդունվել է: Ընդունվել է:

			ամենամյա հաշվետվությունների ներակայացման վերաբերյալ իրավադրույթները, մասնավորապես՝ ամենամյա հաշվետվությունների հասկացությունը, ներառման ենթակա տվյալները, ներկայացման ժամկետները և այլն առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝ «3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում լիազոր մարմինն ընդունում է սույն օրենքի 8-րդ հոդվածից բխող գնահատման ինքակարգավորվող կազմակերպությունների կողմից ամենամյա հաշվետվությունների ներկայացման կարգը:» Ըստ այդմ կետերի համարակալումը վերանայվել է: 4. 4-րդ խմբագրված 5-րդ կետում՝ «6-րդ» բառերի փոխարեն լրացնել «7-րդ» բառերը, իսկ «ակտի հիմքով» բառերի փոխարեն լրացնել «ակտն ընդունվելուց հետո 6 ամսվա ընթացքում» բառերը: Փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «ակտի հիմքով» ձևակերպումը կհանգեցնի տարընկալման, մասնավորապես՝ լիազոր մարմնում առաջին հաշվառման համար գնահատողների ինքնակարգավորվող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կազմակերպությունների կողմից անդամների ցանկ չներկայացնելու և վերջինս հաշվառվելուց հետո եռամսյա ժամկետում ներկայացնելու արտոնությունը կարող է դիտարկվել որպես հիմնական բնույթ կրող իրավանորմ, որն էլ իր հերթին կհակասի Նախագծի 6-րդ խմբագրված 7-րդ հոդվածով լրացվող 24. 1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված՝ անդամների ցանկը ներկայացնելու պարտադիր պահանջին: 5. 9-րդ հոդվածի 5-րդ՝ խմբագրված 6-րդ մասում «ՀՀ» հապավման փոխարեն առաջարկում ենք լրացնել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթը, որի համաձայն. «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաեւ բառերի կամ տերմինների հապավումներ:»:	Ընդունվել է:	Ընդունվել է: